ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

15 սեպտեմբերի 2022 թվական թիվ 159-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՅՈՒ. ՂԱՄԲԱՐՅԱՆ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ԱՆՑՈՒՂԻ 37 ԵՎ 37/1 ՀԱՍՑԵՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դրույթներով, ինչպես նաև հիմք ընդունելով քաղաքացի Նարինե Կարապետի Իգիթյանի դիմումը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի տարածքում գտնվող, Յու. Ղամբարյան փողոց, 3-րդ անցուղի 37 և 37/1 հասցեների 08-007-0209-0166 և 08-007-0209-0112 կադաստրային ծածկագրերով բնակավայրերի նպատակային նշանակության, 0,031578 և 0,06707 հեկտար մակերեսներով բնակելի կառուցապատման համայնքապատկան հողամասերը և դրանց վրա առկա 236,33 քառակուսի մետր մակերեսով կիսակառույց շինությունը, հավասար պայմաններով փոխանակել քաղաքացի Նարինե Կարապետի Իգիթյանին սեփականության իրավունքով պատկանող, 08-007-0209-0165 կադաստրային ծածկագրով 0,085962 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման հողամասի և դրա վրա առկա 295,77 քառակուսի մետր մակերեսով կիսանկուղի հետ՝ քաղաքացու կողմից իրականացվող տնտեսական գործունեությամբ պայմանավորված, հարակից բնակելի շենքերի նկատմամբ սանիտարական գոտու սահմանված չափն ապահովելու և գույքի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին առաջարկել՝ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքերի փոխանակության մասին պայմանագիր և օրենքով սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կ. ԱՐՇԱԿՅԱՆ

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա. ԴՐՄԵՅԱՆ

Ա. ԻԳԻԹՅԱՆ

Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Լ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Գ. ՄԿՐՏՉՅԱՆ

Ա. ՄՔՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

15 սեպտեմբերի 2022 թվական
գյուղ Ախուրյան